



St. Mesrob Armenian Apostolic Church

1326 State Street Racine, Wisconsin

Telephone MEIrose 4-6550

10 փետրուար, 1972

Գերաշնորհ
Տէր Թորգոմ Արք, Մանուկեան
Առաջնորդ Ամերիկայի Հայոց,
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ-Եորք, Մ,Ն-

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Համաձայն Ձերդ Սրբազնութեան հրահանգին եւ Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան, այսու կուգամ հաղորդելու Ձեզի թէ համայնքիս Սուրբ Մեսրոպ Հայց, Եկեղեցւոյ տարեկան անդամական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 30 Յունուար 1972-ին, ի ներկայութեան 75 տրատու անդամներու:

Ժողովը օրինաւոր նկատելով, կարգացուեցաւ եւ վաւերացուեցաւ նախկին ատենագրութիւնը: Ապա միաձայնութեամբ օրուան Դիւանի ատենապետ ընտրուեցաւ Պրն, Ճորճ Սթիվոնս որ վարեց ժողովը ըստ ներփակեալ Օրակարգի եւ տեղեկատուութեանց գրքոյկին, իսկ քարտուղարութիւնը վստահուեցաւ Տիկ, Մարի Քամաքեանին, որուն ատենագրութեան մէկ օրինակը եւս ներփակ Ձերդ Սրբազնութեան կուղարկեմ:

Միական ժողովս, ինչպէս որ ծանօթ է Ձեզի, Սրբազան Հայր, այս առթիւ զբաղեցաւ նաեւ ընտրութեամբը երեք անդամներու որոնք փոխարինելու են Միական Խորհուրդիս շրջանաւարտ երեք ժողովականները: Հետեւաբար, տալով պատկերը ընտրութեան եւ անունները ընտրուած ազգայիններու, պիտի խընդորէի Սրբազան Հայր, որ բարեհաճէիք վաւերացնել անոնց ընտրութիւնը:

Այբեանական շարքով եւ նշանակուած քուէներու թիւով ընտրուած ազգայիններ,

Արմաղանեան Յարութիւն	32 Բուէ,
Միքայէլեան Դանիէլ	27 ::
Սթիվոնս Գէորգ-Ճորճ	48 ::

Առ այդ, Սրբազան Հայր, մտաչելով ի համբոյր Ձեր Ս, Աջին, մնամ որդիական խորին ակնածանօք եւ լաւագոյն մաղթանօք:

Իլերեդ Բհնյ, Եթէնէկեան
Edvard J. Bohn
Հովիւ-Նախագահ
Ս Մեսրոպ Հայց, Եկեղեցւոյ
եւ Միական Խորհուրդի